Շնորհալի դպրոցի տարեվերջյան միջոցառումներ



Ս.թ. հունիսի 5-ին Վաշինգտոնի **Սուրբ Մարիամ Աստվածածին** եկեղեցուն կից գործող **Ներսես Շնորհալի դպրոցում** հերթական մշակութային միջոցառումն էր, որն ազդարարում էր ուսումնական տարվա ավարտը:

Նախակրթարանի և միջին դասարանների աշակերտները հանդես եկան գեղեցիկ ներկայացումներով: Նախակրթարանի սաները ներկայացրին փոքրիկ համար, որն ուղեկցվեց մանկական հայտնի բանաստեղծություններով, երաժշտությամբ և, իհարկե, բուռն ծափահարություններով: Միջին դասարանների աշակերտները ներկայացնում էին մեր մեծանուն գրողներին և նրանց ստեղծագործությունները:

Բեմահարթակը բաժանված էր երկու մասի. մի կողմում մեր մեծանուն գրողներն էին՝ հավաքված Վերնատանը, մյուս հատվածում աշակերտական նստարաններով նկարագրված էր դասարանի տեսարան: Բեմի երկու հատվածները կարծես կամրջել էին 20րդ դարի սկիզբն ու մեր օրերը: Մեծանուն գրողներին՝ Հովհաննես Թումանյանին և Ղազարոս Աղայանին հետաքրքիր էր՝ արդյոք տարիներ անց իրենց կհիշեն: Գործողությունը տեղափոխվում էր դասարան, որտեղ աշակերտները հիշում էին մեր գրողներին ու նրանց ստեղծագործությունները: Միջոցառման ընթացքում աշակերտները ներկայացրին Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթից մի հատված՝ շեշտադրելով, որ գիտելիքին զուգահեռ կարևորվում է արհեստն ու արվեստը:

Ներկայացման վերջում Կոմիտասը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Ղազարոս Աղայանն ու Հովհաննես Թումանյանը ներկաներին հիշեցրեցին մեր անցյալի, ներկայի ու գալիք հաղթանակների ամենակարևոր բանաձևը՝

«Ով հա՛յ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքականի ուժի մեջ»:

Հունիսի 12ին տեղի ունեցան 1-ին, 7-րդ և 8-րդ կրթական հարթակների ավարտական միջոցառումները: Առաջին կրթական հարթակի միջոցառումը նվիրված էր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ոգեկոչմանը, որի ընթացքում առաջին դասարանցիները իրենց թոթովախոս լզվով բանաստեղծություններ նվիրեցին Մաշտոցին և երդվեցին հավերժ պահել սերը հայոց լեզվի հանդեպ: 7 և 8-րդ կրթական հարթակները ներկայացրեցին միջոցառում, որը խորհրդանշական անվանում ուներ «Ո՞վքեր ենք մենք: Որտեղի՞ց ենգ գալիս: Ու՞ր ենք գնում՝»: Այն անդրադարձ էր մեր պատմական, մշակութային անցյալին և մտորումներ՝ ապագայի վերաբերյալ: Անցյալն ու ապագան կապող օղակը այսօրվա սերունդն է:

Միջոցառման ընթացքում աշակերտները ներկայացրեցին հայ առասպելաբանությունից, էպոսից, գեղարվեստական միջնադարյան և նոր գրականություններից հատվածներ: Միջոցառումը կառուցված էր չարենցյան թեմաներով, սյուժեի հիմքում Եղիշե Չարենցի անսահման սերն էր գրքի և գրականության հանդեպ, քանի որ տարին չարենցյան է: Միջոցառումն իսկական տոնի վերածեցին առաջին դասարանցիներն իրենց մասնակցությամբ, որոնք խաղարկում էին առասպելի, էպոսի հայտնի դրվագները, արտասանում հանելուկներ, երգում և պարում:

Շնորհալի դպրոցն ամփոփում է իր 2021-2022թթ ուսումնական տարին և անհամբեր սպասում իր սաներին՝ հաջորդ ակադեմիական տարում գիտելիքների հետաքրքիր աշխարհում միասին ճամփորդելու համար:

Շնորհալի դպրոցի սիրելի աշակերտներ,

Շնորհավորում ենք բոլորիդ՝ ուսումնական տարին փայլուն ամփոփելու համար: Գիտելիքը հզոր զենք է, և, վստահ ենք, որ դպրոցում ստացած կրթությունը ձեզ դարձնելու է առավել անպարտելի և խարիսխն է լինելու ձեր հետագա հաղթանակների: Թող, որ գիտելիքների աշխարհում ձեր հաջողություններն ու հաղթանակներն անսպառ լինեն. դրանք որքան ձերն են, այնքան նաև ձեր ուսուցիչներինն են, և ամենակարևորը՝ մեր Հայրենիքինը:

Աշխարհի որ անկյունում էլ լինեք, հիշեք, որ մեր Հայրենիքը գրկաբաց սպասում է ձեզ՝ հյուրընկալելու, բնակվելու և գիտելիքներով կիսվելու համար:

Սիրով՝

Շնորհալի դպրոցի անձնակազմ: